

ՈՍԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	15
Սրբապատկանի համար տարեկան	8

Ստերիկայի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	1.50

Ծանուցան շոքր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմետր հ. երեսին առաջին անգամը համար 20 0/0 զեղչ կըլի 1-րդ և 2-րդ անգամը համար 10 սանթիմետր

ՇԱՐՋՈՒՄ

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՊԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿՐ ԶՐ ՏՐՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ԵԱԲՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Մանկի և զրան զրկելի
հիւսնագրութեան հաս
ցիկն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjourn“
Varna (Bulgarie)

Արտատպանի համար
ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք և ս յն սրտի

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐ ԷԱՎԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՆՊԱՏԱԿԸ

Նախորդ յօդուածներով մենք ուզեցինք ցոյց տալ որ սօցիալ-իզմով զբաղվելու ժամանակը չէ հասած մեր ժողովրդի համար, որովհետեւ մեր առջեւ գրված է մեր ցեղի գոյութեան, «լինել չլինելու» ճակատագրական հարցը:

Այդ հարցը մեր ժողովրդին ի նպատակում լուծելու համար, պէտք է որ մենք չեղձենք մեր բուն գործից — ցեղային գոյութիւնը փրկելու համար սկսված պայքարից:

Հայը այսօր իր ամբողջութեամբ, իր դասակարգերի, որոնք այնքան իրարից չեն տարբերվում, ինչպէս եւրոպական ժողովրդներին մէջ է, միաձոյլ զանգվածով մտնում է մեր ցեղի թշնամիների ձեռքով:

Մեր առաջին և էական նպատակն է այդ բնաջնջումի առջեւ առնել ընդմիջտ և ապահովել մեր ցեղի յարատեւութիւնը:

Այդ դժուարին գործը յաջողութեամբ առաջ տանելու համար մեզ պէտք են մեր ժողովրդի բոլոր խաւերը — բուրժուա, կղերական, գիւղացի և նոյնիսկ ամենաչնչին թիւ ունեցող բանւորը, որովհետեւ գրանք բոլորն էլ կարող են մեր գոյութիւնը փրկելու գործին թէ նիւթական և թէ բարոյական միջոցներ հայթայթել, եւ այսպիսի պարագաներում, երբ մենք մեր ժողովրդային զանազան խաւերի մէջ արհեստական կերպով, երազանքներ են թարկվելով, խրամատներ ստեղծենք, բացարձակապէս դաւաճանած կը լինենք մեր ամբողջ ցեղի փրկութեան գործին:

Ո՞վ չի ուզում որ հայ բանւորը չը հարստահարվի, ո՞ր գիտակից յեղափոխականը կարող է զուրկ լինել այդ ներկայումս տարրական ըմբռումից: Բայց հայ յեղափոխականի առջեւ գր-

ված է ամբողջ ցեղի փրկութեան մեծ գործը. նա անկարող է առայժմ իր ուժերը ներկայացնել ժողովրդի մի շնչին մասի շահերին: Մեզի փրկութեան առջեւ նստածնում է բանւորի շահը. եւ մեր սօցիալիստները, որոնք հայ բանւորների անունով են երդվում, բացի ֆրազներէրց ուրիշ ոչինչ չեն արել հայ բանւորի համար, ընդհակառակը ներանք հայ բանւորին մղում են դէպի մի, առայժմ, աննպատակ գործ, երկրորդական նպատակ են ընդունում ցեղի փրկութիւնը: Կառուցելու այսպէս ասաց, Մարկսը այնպէս ասաց, էնդէլսը մի այլ կերպ, ահա մեր նորեկ սօցիալիստները միակ զէնքերը իրենց գոյութիւնը արդարացնելու, իրենց ընկերաբան գիտնականներ ներկայացնելու համար:

Բայց այդ մեծ ընկերաբանները ո՞ր ժողովրդին ասացին, ընկերային ինչ պայմանների մէջ քարոզեցին իրենց վարդապետութիւնը, գրաւ մասին շատ քիչ են խօսում մեր սօցիալիստները:

Լսել են որ բուրժուան, կապիտալի իր ձեռքերում կեղծոնացնելով, կեղծում է հազարաւոր եւրոպացի բանւորներին. լսել են որ Եւրոպայի և Ամերիկայի դործարաններում բանւորները ստրուկի վիճակի մէջ են գտնվում և այդ տեղերում սօցիալիստները կանոնաւոր պայքար են մղում բանւորին դուրս կորզելու այդ անտանելի վիճակից. բայց չեն ուզում գիտենալ որ Հայաստանում ոչ այդ կապիտալիստները կան, ոչ այն ինդուստրիան կայ, ոչ էլ այն թուով բանւորներ կան, և, բացի դրանից, Հայաստանում ցեղային գոյութեան անմիջական կոտորակայ:

Լսել են այդ բաները մեր սօցիալիստները, միայն լսել, չեն տեսել: Դրանցից շատ քիչերն են յանդգնել բանւորական կեանքը մօտիկից ուսումնասիրելու և յանդգնում են այսօր մեզ համոզել որ իրենք մեծ բանի վրա են, մեծ

դատ են պաշտպանում, հայ յեղափոխութեան վարիչները կամ գործիչները գաղափար չունեն սօցիալական յեղափոխութեան մասին, չեն ըմբռնում ժամանակի պահանջները: Խօսքեր, ֆրազներ և բառեր, դուրս ժայթքած թուլակներ թերաններ, յիմարութիւններ, որոնց առջեւ երկամ հաւն էլ կը ծիծաղի:

Ոչ պարոն մանր ու խոշոր, անխառն սօցիալ դէմոկրատներ, ի զուր են ձեր ճիգերը, ի զուր ձեր ֆրազները, ի զուր են այստեղից այնտեղից յափշտակած և չը մարսած ցիտատները. գործի սկսեցէք, գործի: Եթէ քաջութիւնը չունէք ցեղի գոյութիւնը փրկելու համար մղված պայքարին մասնակցելու, գոնէ ձեր հետեւած վարդապետութեանը գործնականապէս ծառայեցէք: Մասնայեցէք գործնականապէս ձեր վարդապետութեան, որովհետեւ դուք չէք ըմբռնում թէ հայ ժողովրդը այժմ ինչի պէտք ունի, և պէտք չէք կարող գալ հային. սօցիալար եղէք գոնէ ձեր գաւանած վարդապետութեան, և մենք ձեզ կը ծափահարենք, որովհետեւ գոնէ մի բան անելիս կը տեսնենք ձեզ:

ՎԱՐՂՈ

Մի ԳԱ. Ի ՆՈՍՒԻ Պ. Ա. ՉՊԱՆԵԱՆՈՒՆ

Վերջինս Պ. Ա. Չոպանեանը կրկին դուրս ընկաւ յեղափոխական քննադատի դերում, իր ոչ յեղափոխական մտքի արտադրութիւնները առաջարկելով հայ ժողովրդին իրբեւ մաքուր անկեղծ սրտէ բղիժած զգացմունքներ եւ քաղաքագէտի արդիւնաւէտ ծրագրեր: Նա մի քանի անգամներ ըմբռնեց իր անկարողութիւնը այդ դեպքերից իր ժխորը, խոստացաւ ընկզմով իր գրական փորձերի մէջ, որպէսզի ապագային կողոտցներով չը խանգարէ յեղափոխութեան, կամ աւելի ուղիղ մարմնի գործի ընթացքին: Այժմ նա դուրս է ընկնում մի նոր բրոջիւրով — «Վարկեանը» խորագրով, նա տքնում է վերլուծել ներկայ քաղաքական ճգնաժ-

մային սվայրկեանը, կամ գէթ միայն յատկաբանում այդպէս է խոստանում ընթերցողին, սակայն ընդհանուր առմամբ այդ բրոջիւրի բովանդակութիւնը ու նպատակը չեն համապատասխանում ընտրած նիւթին, չեն պարզաբանում նրան, Բալկանեան փոքր պետութիւնների խառն դրութիւնը եւ մակեդոնական ապստամբութեան ներկայ աղմուկը չըջանը Պ. Չոպանեանի աչքին թրուում են հայկական ապստամբութեան, շարժումների համար ամենաբարեպատեհ առիթ, արգասաւոր քաղաքական «վարկեան»: Նա մեծ յոյս է տածում նոյնիսկ հաստատ համոզված է թէ Ռուսաստանը անպատճառ պէտք է այժմ ամենախիստ դիմումներ անէ թուրքաց յօգուտ Մակեդոնիոյ, նրան հասցնէ իր իդէալին, շնորհելով բազմաթիւ ազատութիւն: Նա փաստերով է ապացուցանում, թէ հայերս առանց յեղ. շարժումների ոչինչ չենք ստանալու եւ կորցնելու ենք այս 1878ից յետոյ երկրորդ ամենայարմար առիթն էլ, «Թանկագին վարկեանը»:

Մենք չը գիտենք թէ ո՞րտեղից է հանում Ռուսիոյ այդ արամադրութիւնը, որը բոլորովին հակասում է եւ՛ Ռուսիոյ ներկայ քաղաքական վերաբերմունքին դէպի Մակեդոնացիների յիշատակելի, դիւցազնական կուրի, եւ՛ սկանաւոր եւրոպացի քաղաքագէտների կարծիքին: Բայց այդ մի կողմ թողնենք, Պ. Չոպանեանը այլ իրականութիւն է ուզում պարզել, որը միայն նրա աչքերին է տեսնելի: Հայ յեղափոխութիւնը այժմ աւելի քան երբէք անգոր է, կազմակերպութիւններից ամենագործող, որի վրայ են կեղծոնացել ամբողջ հայ ազգի ազատութեան վառ յոյսերը, ոչ մի ուժ չի ներկայացնում երկրում եւ այդ յոյսերը անհրաժեշտօրէն պէտք է փոշիանան, երազներ փոխեն: Դա Պ. Չոպանեանի արտաբուխ փափուքն է, որ այնեւ ժողովուրդը կանգ առնի գործիք, դասալիք լինելուց, միանգամ ընդմիջտ համոզվի որ Դաշնակցութիւնը չի ներկայացնում ոչ մի կամ երկ ներկայացնում էլ է որոշ վայրերում, գրանք անօգուտ են եւ այն: Ինչո՞ւ որովհետեւ Պ. Չոպանեանն է այդպէս համոզված, որովհետեւ «Եւրոպայի» մէջ Մշից, Վանից եւ Բասնիզի արպագրած նամակները անձայր ցաւ, տառապանք են ներկայացնում, հալածանք եւ անյուսութիւն են պարզում, որովհետեւ «Եւրոպայի» առաջնորդող յօդուածը, այժմայ արարեպատեհ վարկեանում» կուրի եւ զէն-

քի հրաւերի, մարտական որոշ դիրքի փոխարէն — ստ Պ. Զօպանեանի — սերտ կապ եւ համերաշխութիւն է ցանկանում հայ ժողովրդի ղեկավար տարրերի մէջ, Դժբախտ է հայ ժողովուրդը ներկայ հանգամանքում, նրա յուսոյ նշույլը խափանվում, խաւարում է: Այդ պայմաններն առաջին մասում պարզված, կամ աւելի ճիշդը թաղանթաւ նպատակն է:

Սրկրորդ մասում Պ. Զօպանեանը ճանաչում է ընդհանրապէս հին հնչակեաների սօցիալիստական գաղափարները վրայ, որ քարոզում են իրանց բազմաթիւ օրգաններում եւ մասնաւորապէս նրանց յառաջացրած վնասակարութիւնը այն կէտում, թէ Ռուսաց կառավարութիւնը արամադրվում է թշնամաբար դէպի մեր տառապեալեան դատը: Մենք այժմ չենք կարող վիճել լոկ սօցիալիստական գաղափարների համար եւ որոշ չափով համաձայնվում ենք տեսական հոգի վրայ: Բանւորական շարժումները մեր դատին վնասում են ոչ նրա համար որ թշնամաբար են տրամադրում ուսաց կայսրութիւնը, այլ նրա՝ որ զուր տեղը, կամ շատ չնչին օգուտները համար ջլատում, փշտացնում են մեր թարմ եւ անչափ հարկատու ոյժերը: Պ. Զօպանեանը իր քաղաքագիտական (2) աշխատութիւններում քիւնազգետի հոգի է առնում ղեկ պնդելով իր ակնկալութիւնների վրայ ուսու բռնակալութիւնից:

«Բայց անհերքելի է որ արեւելեան խնդրոյն արդի կացութեան մէջ, Ռուսիա կերեւայ իբրեւ միահեծան տէրը, որմէ կախում է ամէն բան, առանց որուն ոչինչ կարելի է՝ այս կամ այն ուղղութեամբ:» Ահաւասիկ Պ. Զօպանեանի հեռատեսութիւնը, նրա քաղաքագիտական ազդանդի(2) մերկութիւնը: Դեռ երէկ «Նիւսիսային արջը» իր թաթը մեկնեց մեր ազգային ինքնուրոյնութեան միակ ազդակին, հայոց եկեղեցական կալուածներին, առանց ու եւ հիմունքի աւազակաբար ուզոմ է գրաւել զըրանց, իսկ Պ. Զօպանեանը առաջարկում է «եօրա գնալը նրա հետ, որովհետեւ նա է մեր ինդրի «միահեծան տէրը», նրանից է կախած հայ ազգի ազատութիւնը: Մենք կարծում ենք, քաղաքական հանգամանքներում ամեն տէրութիւն առաջնորդվում է լոկ իր սեփական շահերից եւ ոչ թէ այս կամ այն ցեղերի կոմպրոմիսներին: Հրէա ազգը այդ քաղաքականութեան հետեւելով ոչ միայն չէ արժանացել ինքնիշխան անկախութեան, այլ եւ ենթարկվել է ամենածանր հալածանքների, կորցնելով նաեւ իր ցեղային առանձնայատկութիւնները:

Մի ուրիշ տեղ տեսէք թէ Պ. Զօպանեանը որպիսի մանր մունր հաշիւներով, աննշան երեւոյթներով է բնորոշում ուսաց քաղաքականութիւնը, երեխայական հետեւողութիւններ, տրամաբանութիւններ աւելով:

«Ռուսիա մեզի հանդէպ կը վարուի բացէ ի բաց իբրեւ թշնամի մը: Եթաթօս՝ մեծ միթիւքը կազմակերպող Յրանապիները դիմած էին Պ. Տելքասէին, խնդրելով որ Թրքաստէրի թատրոնը, որ ֆրանսական կառավարութեան կը վերաբերի, միթիւքը սարքողներուն տրամադրութեան տակ ղենէ: Փարիզի ռուսական դեսպանը զայդ իմանալով խնդրած էր Պ. Տելքասէին, որ այդ սրահը չար-

րուի՝ քանի որ բանաստեղծը Մակեդոնական խնդրին կուզէին կցել հայկական հարցը: Եւ Պ. Տելքասէ շտուաւ այդ սրահը, որովհետեւ բանաստեղծը յամառեցան անբաժան պահել Հայկական հարցը Մակեդոնականէն: Ասկէ աւելի պայծառ եւ համոզիչ իրողութիւն կարելի չէ գտնել: Ասի կապացուցանէ որ (ուշագրութիւն) 1. Ռուսիա չուզեր որ Հայկական խնդիրը զոյուցիւն ունենայ այլեւս՝ այն ձևով, սրով գոյութիւն ունեցած է ցարդ: 2. ֆրանսական կառավարութիւնը նախամեծար կը համարի իր դաշնակցին շահերուն համաձայնիլ՝ քան Հայոց շահերուն: Միամտութիւն չէ՝ այլևս յուսալ որ Մակեդոնական հարցին հետ Հայկականն ալ պիտի լուծուի եւ լուծուի մեր ուզած ձևով:

Արժէր մի քանի պարբերութիւններ եւս մէջ բերել այստեղ, սակայն մենք կարծում ենք, թէ սա՛ էլ բաւական է, ցոյց տալու համար թէ որպիսի չնչին իրողութիւններ վերայ են հիմնվում Պ. Զօպանեանի տրամաբանութիւնները: Նրա քաղաքագիտութիւնը, պոլիտիկան, ըստ Պ. Զօպանեանի, շատ հաւանական է մի օր Ռուսաստան ու Գերմանիան պատերազմի բռնվեն նրա համար, որ Ռուսիայում բնակվող Գերմանացիները ֆուսպայի փոխարէն խաշաւուս են ճաշակում, Այս կարելի է ենթադրել, երբ մի ինչ որ Տրոքսկիսթի Թատրոնի մէջ միթիւքն անելու արգելումից երկու պետութիւնները քաղաքական յարաբերութիւնները կարող են կախում ունենալ, երբ դրանից քաղաքական բարդութիւններ հետեւել կարելի է: Այսպէս թէ այնպէս, ուրեմն հին Հնչակեաններն էլ արդէն մեր դատին բացի օգտակար չը լինելուց, վնասակար են իրանց յառաջացրած բանւորական շարժումների հետեւնքով, թշնամաբար տրամադրելով Ռուսաստանին դէպի մեզ, ումից կախում ունի մեր գոյութիւնը, ով մեր սխնդրոյն միահեծան տէրն է»: Ահաւասիկ ձեզ մի երկրորդ չարիք, մի երկրորդ վնասաբեր հանգամանք: Որ տեղից է գալու ուրիմի փրկութիւնը, ու՞մ պէտք է ապա ինչ հայ ժողովուրդը: Լսեցէք, համատարած խաւարի եւ անյուսութեան մէջ մի յուսոյ փարոս է ցոյց տալիս Պ. Ա. Զօպանեանը: Այդ փարոսը, նոր Հնչակեանների սրանից երկու տարի առաջ կազմած ծրագրին է եղել, որը սակայն մինչև այժմ էլ լոկ ծրագիր է մնացել, առանց կազմված մի քարտեզ արձան, դէպի ուր ե պարզված է Պ. Զօպանեանի ձեռքը: Այնտեղ է հայ ժողովրդի ազատութիւնը:

«Ճիշտ, որովհետեւ իրենք են ամէնէն ճիշտ տեսնող վեր. Հնչակեանները, ամենէն սգործնական» ծրագրին ունեցող կուսակցութիւնը, ամենէն աւելի իրենց վրայ կը ծանրանայ իրենց բոլոր ուժը բուն գործին նուիրելու եւ անմիջապէս ու միայն անով զբաղելու պարտականութիւնը»: Այս տողերը այդ փարոսի գովաբանական նկարագրութիւնն են կազմում:

«Այդպիսեանք ուրիշ բան չէ, եթէ ոչ մի անպատիւ, չափազանց նեղ ողով եւ խոշոր առանցքով գրված ոգիւրամ, յայտարարութիւն, որով Պ. Ա. Զօպանեան՝ անպատեթեան անունով հայ ազգին հրաւիրում է դէպի վեր. Հնչակեաններին անցեալում կազմած եւ ապագայում գործադրելի ծրագիրը,

վարագրելով միևնոյն ժամանակ բացայայտ իրողութիւններ:

Էմիլ Եղաշեանց
25 Օգոստոս 1903

..... Խմբագիր

Պարխար լեռներու անճոռնի արջը, իր քուրջի կտորին վերջին թիւին մէջ, Պուքրէշէն լուր մը տուած ատեն՝ փոխանակ միայն զիս հարուածելու, անմեղ ընտանիքի մը անաղարտ անունն ալ աւրելու անագորոյնութիւնը գործած ըլլալով, երկտող գրութեամբս կը փութամ յայտնել թէ՛ այդ վատահամբաւ «Սօֆիստ» հնուց ի վեր ի՞նչ հետ ունեցած ատելութիւնը յագեցնելու համար իմ իբր թէ!! Կապորիսի ընթացքս կը պախարակէ գրելի միշտ Սիլիսարէի գէղքը յիշելով՝ չլքիկութեամբ մը. ուրիշ, ոչինչ:

Իրօք, եթէ այդ ոչօրպա՞ մը տամոլորին պաշտօնը՝ առանց հաստատելու՝ ընտանիկան ու անհատական սրբութիւնները պղծելը է շարունակ, ուրեմն մենք ալ անպայման իրտուներ պիտի ունենանք, ո՛չ գողներն եւ ուրիշ բերնով, այլ աճածք իրենց դիտել տալ թէ, ինքն, միայն ինքն է որմէն վատութեանց ընդգուցակո՞ւ: Մինչդեռ շատ ատեն օտարուհիներու հետ ապրողները կը քամահրէ կեղծ բարոյակա նութեամբ մը:

Ո՞վ յիմար բժիշկ, նախ որ շուկեա զանձն քո՞ ի հիւանդութեանէ անբարոյականութեան:

Գալով Պուքրէշէն տրուած լուրին հեղինակին. հոս «խենդ Արամ» յորջորջուած ինչպիսի մըն է, որ հանգուցեալ Սմարտեանի քով ծառայ եղած եւ վաճառած ըլլալով, անկեղծութեան պատրուակին տակ ուզած է յիշեալ անոք ընտանիքին պատիւը ոտնակոխել ճիւղաղօրէն:

Աւտի անդամ մըն ալ կը յարեմ, Սօֆիստ էֆէնտին այս սեռակ խենդերու խօսքին հաւատալով իր քուրջի կտորը հաշան ոչպարտազոր՝ ընելու տեղ, թո՞ղ շիտակ գիմէ իր գոված «Սմանեան փառապան» նախնիներուն՝ մէկ հիւպատոսարանը, ուր ապահովաբար իր հանապազօրեայ սնունդն եղող սեղր պարտութիւններն ու վատարանութիւնները լաւ գրամ կը շահեցնեն իրեն:

Կարծեմ վերջ ի վերջոյ ընելիքն ալ ան է, որովհետեւ ամէն կողմէն իր խեղճեկրակ թերթը ետ կը դարձնեն:

Այս բոլոր դրամներուս պատասխանատու եմ:

Մ. Կ. Անրեան
Պուքրէշ

28 Օգոստոս 1903

ԿԱԼԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցեալ կիրակի մի քանի պարոններ, թերթիս խմբագրի հետ միասին դիմեցին Թաղական Խորհրդին՝ առաջարկելով որ Թաղական Խորհուրդը, իբրև ազգային պաշտօնական մարմին, յանձն առնէ Վառնայի մէջ պատրաստվելիք հանրագրութիւնը ուղարկել Ամենայն հայոց կաթողիկոսին: Որոշվեցաւ չորքուրթի երեկոյան հաւաքվել և քննել նախապէս պատրաստված գրութիւնը, ու անմիջապէս ձեռնարկել ստորագրել տալու:

Կարելի է համոզված լինել որ եկող կիրակի արդէն հանրագրութիւնը պատրաստ կը լինի և կուղարկուի որի որ պէտք է:

Մեր կարծիքով լաւ կը լինէր որ Խորհուրդի այլ քաղաքների հայերն էլ նոյն ձևով արտայայտեն իրենց ցանկութիւնը մեր ծերունի Հայրապետին, խնդրելով նրանից հաւատարմ մնալ իր մերձուկական պատասխանին:

Ձը մուսանք որ գործներս ուսու կառավարութեան հետ է, որ այդ վայրերի կառավարութիւնը կարող է և առանց կաթողիկոսի ըստորագրութեան գրաւել մեր եկեղեցիների կալուածները: Բայց և այնպէս մենք իբրև ժողովուրդ՝ պարտական ենք մեր իրաւունքները մեր կարողացած ձևով պաշտպանելու ճիշդ թափեք և լրջօրէն պահանջել մեր հոգևոր պետից որ նա չը զիջանի, որովհետեւ այդպէս է պահանջում մեր ժողովրդի արժանապատուութիւնը:

Խրազ ուրիւն

ՄՍՏԻՉԸ ԻՐ ԽՂՃԻ ՀԵՏ

Աւագի անպատ մը կը տարածուէր կապոյտ եթերին տակ. հեռուէն շատ հեռուէն. տեսողութեան սահմանը կը կտրեն աւաղի բլրակներ: Սոսկացուցիչ լուսիւն մը կը թափառէ ամէն կողմ, նոյնն է բարձրը. կոնցիւրն ժամեր և զուչես տեսներ գէթ երկնքի մէջ ճախրող արծիւ մը. հոս խաղաղութեան երկիրն է, բնութեան՝ դիտեցմանը. ամայի ու խորհրդաւոր ամէն կողմ:

Անպատի մէջէն կը քաշէր մարդ մը, մարմինը կրծածկէին պատաստած և ապտոտ քարերը. սեւցած ձեռքով բռնած էր գաւազան մը՝ առաջնորդ իրեն. դէմքը նոյնպէս սեւ էր. միայն սքեքերն էին, որ յօնքորու տակ թաղուած, անցեալի պատկերը անկզմ պահած էին. նայած քր յառած գետին՝ յառաջ կերթար. բայց յանկարծ կեցաւ. սպառնական նայածք մը ձգեց շուրջը և ծայրագոյն կատաղութեան մը համակուած բռնկեցի հարուածներ տեղացուց օդի մէջ:

Այս մարդը զինք հալածող անհրեւոյթ ոգիներու դէմ կը կուտէր. յաղթութիւնը ոգիները տարին. սոսկալի փրկուր մը ելաւ բերնէն, ինչ

զած է 3 տարի շարունակելով իր պաշտօնը, դպրոցը ազատել 3000 լէվ պարտքէն. 2000 լէվի մաս պատրաստ զբամ գոյացնել, պաշտօնէից ամսականները առանց յապաղման կանոնաւորապէս վճարել եւ 3 տարուան շրջանին մէջ 12 ուսանողներ շրջանաւարտ ունենալ:

Իսկ եթէ այս տեղեկութիւններն ալ բաւական չըլլան եւ դեռ մութին մէջ մնացած կէտեր կան, հոգաբարձութիւնը պատրաստ է իրեն դիմողներուն աւելի ընդարձակ բացատրութիւններ տալ եւ ցոյց տալ որ հոգաբարձութեան ըրած այս կարգադրութեանցը մէջ անտեղութիւն մը չկայ:

Հոգաբարձութիւն երկուսն վարձարանաց,
(ԿՆԻՔ)

Պատ. խմբագրութիւն
«Շարժում»
Վառնա

Ողբացեալ Շահէն Մխոյի և Գարեգին Արթուրի յիշատակին սգահանդէս մը սարքելու համար ընտրուած կարգադիր մասնախումբս կը փութայ ձեզի զրկել ներկայեալ որոշմագիրը խնդրելով որ հաճիք զանոնք հրատարակել ազգագուտ թերթիդ մէջ:

Այս նահատակներուն է պատիւ սարքուած սգահանդէսը տեղի ունեցաւ՝ օգոստոս ամսոյ 23ին՝ տեղւոյս Եգիպտ. թատրոնին մէջ՝ ներկայութեամբ 400ի չափ ամեն դասակարգի և այլազան համոզումներով ազգայիններու:

Այս որոշմագիրը ուրեմն՝ արդիւնքն է այն եզրակացութեան՝ որուն յանգեցաւ ներկաներս ինչ որ մեծամասնութեան ձայնով ընդունուեցաւ:

Սիրելի է մեզ յուսալ որ դուք ալ ժողովորդասիրաբար պիտի ձայնակցիք այս որոշմագիրերու արձագանքին, վերջ մը դընելու համար այս եզրայրասպան դրութեան, որուն այնքան դատապարտելիօրէն հետեի կը ձգտին մեր յեղափոխական այս կամ այն մարմինները, ի միաս մեր ազգային շահերուն, աւելորդ է ըսել:

Մնամ Յարգանք
Ի Դիմաց Կարգ. Մասնախմբի
Վ. Ատենադպիր Ատենապետ
Կ. Երզնկայեան Շ. Երզնկեան
Յ. Գ.

Ղրկուած են նաև «Իրաւունք»-ի «Հայրենիք»-ի, «Չայն Հայրենեաց»-ի, «Ազատ Բէմ»-ի, «Բիւնիկ»-ի և «Հայերի»:

ՈՐՈՇՄԱՆԱԳԻՐ

Հին Հնգու. ՍՍԳՈՒՆԻ-ԱՐՁՈՒ. ՄԱՆԵԱՆՑ ԵՒ ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ Հն. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՂՐՈՒՆՆԵՐՈՒՆ, ՈՒՂՂԵԱԼ

Նկատի ունենալով որ Հայ Հնչական կուսակցութեան վարիչները փոխանակ իրենց կոչման

հետեւելով Հայ ժողովրդին ցաւերը դարմանելու, վերջերս սկսած են կուսակցական և անձնական զձուձ նկատումներով եղբայրասպանութիւն գործել, հետևաբար Գահիրէի հայ հասարակութիւնը՝ ամսոյս 23ին՝ եղբայրասպանութեան երկու զոհերու յիշատակին սարքուած սգահանդէսը ըլլալու պահուն, մտատուրապէս 400ի չափ ձայնով, որոշեց ձեզ յայտնել իր զայրոյթը և սրտմտութիւնը՝ Շահէնի և Արթուրի սպանութեանց մասին, որոնց հեղինակը նկատած է ձեզ, Սագունի-Արզումանեանց կէղքընը՝ շատ մը որոշ փաստերու վրայ յենլով և կառավարիչ որ դուք ձեզ արգարացնէք եղած ամբաստանութիւններու դէմ:

Գահիրէի հայ հասարակութիւնը կուզայ ձեզ ազդարարել որ, եթէ երբեք շարունակուի ձեր կողմէն այդ եղբայրասպան ընթացքը՝ իբր միջոց անձնական կիրքերու գոհացում տալու՝ միանալով արտասահմանի բոլոր Հայ հասարակութեան հետ, ստիպուած պիտի ըլլայ այդ պժգալի ոճրագործութեան առաջը առնել, իր յարմար դատած եղանակով:

Սգահանդէսի կարգ. Մասնախումբ
Արևելցի Շ. Երզնկեան
Արաշխս Յ. Յոյսիֆեան
Կ. Երզնկայեան, Յակոբ Բարսեղեան
Ս. Օռնպաշեան, Վ. Զիզնիկեան
23 Օգոստոս 1903
Գահիրէ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռուսներու մէջ հրատարակուող «Էնտէպանտան Ռուսներ» ֆրանսերէն թերթի մէջ հրատարակուած հեռագրէ մը կիմանանք, հովիտսի Գանձակ (Էլիզապետպոլ) քաղաքի մէջ եւս հայերը հակահառաքարական խոշոր յոյց մը ըրեր են եկեղեցական կալուածները գրաւելու պատճառով: Զինուորները պաշարեր են ցուցարարները, երկու կողմէն ալ հրացանաձուլութիւն տեղի ունեցեր է. քանի մը անձեր վիրաւորուած են:

—Պոլսական թերթերէն կիմանանք որ խառն ժողովը Պոլսոյի առաջնորդ Յովհաննէս Եպիսկոպոս Արքայունին Ռուսներու հայոց հովիւ կարգած է:

Կրտսէն թէ այդ Եպիսկոպոսը պիտի կարենայ օգտակար ըլլալ Ռուսներու հայոց:

—Պոլսոյ հայ եպիսկոպոսները նոր գումարում մը ունեցեր են. այստեղ կարգադուր է կաթողիկոսին կոնգրէ, որով կրտսէն թէ սինօզը համակերպած չէ ուս կառավարութեան որոշումին և հրաժարած է. ու կաթողիկոսը այս կերպով ալ ներքին գործոց

նախարարին գրիւ է, Եպիսկոպոսները պատրիարքէն ինքրած են հիւսազրով կաթողիկոսին իմացնել որ իրենց բաղձանքն ալ նոյնն է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լուր կը պըտտի որ պատերազմական նախարարը հրաման տըրուած է զինուորներուն պէտք եղած պարագային Մակեդոնացի հրոսախմբերը հետապնդելու ատեն ուղղակի պուլկարական հողը մտնեն:

—Իտալական նշանաւոր թերթի մը, Մենսթեթոն կարծիքով եւրոպական զինեալ միջամտութիւն մը անհրաժեշտ է մակեդոնական խնդրի առթիւ:

—Ն. Ֆ. Բրէս. թերթի մը կը հաղորդէ որ Սելանիկի մէջ ձերբակալուած է պուլկար յանձնակատար մը, որուն քով պոմպա մը և 100 քիլոյի չափ տրինամիտ գտնուեր է:

—Պոլսոյ Բաղըմ փաշա թաղին մէջ քանի մը հարիւր ոստիկաններ խուզարկեր են թուրքերու տունները և բոլոր զէնքերը գրաւեր են:

—«Փայմզ» կը հաղորդէ որ Հիլմի փաշան բոլորովին կարելորութիւն չի տար պաշտօնի անցած երկու Եւէտացի սպաներ ևն Սյո սպաները ստիկանական խիստ հակոյութեան տակ կը գտնուին:

—Թուրք կառավարութիւնը մտադիր է եւրոպական թերթերու բոլոր թղթակիցները Մակեդոնիայէն դուրս քշել:

ԱՆԳԼԻԱ

Մանչէսթրի մէջ տեղի ունեցեր է Անգլիացի բանւորներու Միութեան «Տրամ. Ոնիօն» համաժողովը, որուն կը մասնակցէին մօտ մէկ միլիոն բանւորներ: Այդ համաժողովին մէջ՝ ի միջի այլոց՝ որոշում տրուեր է Անգլիական կառավարութեան պահանջել պաշտպան հանդիսանալ ապստամբ Մակեդոնիային:

Խմբագրութիւն թաթար Բազարդի հետեալ 3 ազգայիններէ ստացած 9 լէֆն ալ յանձնեց տեղւոյս թաղական Խորհրդին:

Տ. Անտոն Շահիրիկեանէ 5 լէֆ Գէորդ Թալուրեանէ 2 լէֆ Ստեփան Մ. Գարրիէլեանէ 2 լէֆ

300,000 ՅՐԱՒԻ ՄԵՆ ՊԱՐԳԵԻՐ

Մեր յայտարարութեան համաձայն յառաջիկայ 1 հոկտ. եւ 18 սեպտ. ինքաշուկիք բումէլի երկաթուղի պարտատուներուն բրոմէաները առիւթ, որոց թիւերը ստորեւ նշանակուած է. այս բրոմէաներէն ելած պարգեւներուն 3/4 երեք չորրորդ պիտի բաժնենք մեր պատուական յաճախորդաց, ուստի ամէն անոնք, որ բան մը չը տարով կուզեն բացառիկ շահ մը ունենալ՝ փութան մենէ կանխիկ ալ և ալ նիւթեր առնեն, որպէսզի արժանանան օրն բրոմէաներէն ելած պարգեւներուն, այս անգամուն ատ. 9ին մէկ պարգեւն է 300,000 Ֆրանք. ամէն երկու ամիսը անգամ մը պիտի առնենք օրն բրոմէաներէն և եթէ քաջալերութիւն գտանք պատուարժան Ազգայիններէն, ուրիշ պարգեւաւոր թուղթերու բրոմէաներ ալ պիտի առնենք. ելած գումարները՝ մեծ ու պզտիկ՝ վերոյիշեալին նման բաժնելու մը պատ. յաճախորդաց:

Մեր կեդրոնատեղին է Մուսուլայի հրապարակ, Հաճի Հասան խանին դէմը. կոչակար Սիմոն Այայի խանութը:

Բրոմէաներուն թիւը. 938029
439311
Հ. Մ. Կիւմիշնիսեան
31 Օգոստոս 1903
Վառնա

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Սարգիս Մխոյեան 35 տարեկան, (Պիթիւցի) Կորուզ գիւղացի, 1896ին առիւթ ուր զանուիլը յայտնի չէ, իրեն ծանօթ, բարեկամ և կամ հասցէն գիտցողներ թող հաճին իմաց տալ:

Մարտիրոս Ուչատուրեան (Պիթիւցի) մայ կոծն պո, րոհյ Եօ. Թ ի. Անիւրիկա եւ կամ խմբագրութեանս:

ԹԱՏՐՈՆ ՍԼԵՏԻՆԵՆԻԷ

Պապան թատերախումբը թողած է Բիկայի ամանախին թատրոնը և փոխադրուած է մուսալլա Սաէտինէնիէի սրահը, շարունակելու համար իր ներկայացումները, որոնք հետզհետէ աւելի ախորժելի դառնալու վրայ են:

Վալը, հինգ շաբթի գիշեր, «տեղի պիտի ունենայ առաջին երեկոյթը:

Տօպրիչի համար Չայնաուր. սուցչի մը պէտքը կայ, փափաքողը կրնան դիմել տեղւոյս թաղ. Խորհրդոյ:

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ՝ Ն. Միսակեան (ԿՆԻՔ)
17 Օգոստոս 1903
Տօպրիչ

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Педатинча „Взаимность“ Варна